



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 17

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով, որոշում եմ՝

2018թվականի փետրվարի 23-ին գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով

1. Ակունքի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N 49-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին
2. Ակունքի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 44-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3. Ակունքի համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի N56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
4. Ակունքի համայնքային սեփականություն հանդիսացող հողերը աճուրդ - վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին
5. Ակունքի համայնքի Նոր Գյուղ և Կապուտան բնակավայրի համայնքային և քաղաքացիների սեփականություններ հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու մասին
6. «Ակունքի խոշորացված համայնքում կոմունալ ծառայությունների բարելավում, սանիտարական և բնապահպանական ենթածրագրերի իրականացում» ծրագրին մասնակցելու համար ՀՏՀՀ-ին հայտ ներկայացնելու մասին
7. «ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրով» նախատեսված ֆինանսական հոսքերը ապահովելու նպատակով ծրագրի վարկային պարտավորությունները ստանձնելու վերաբերյալ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 Փ
գ. Ակունք





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 18

**ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Համաձայն Ակունքի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 55-Ն որոշման 2-րդ կետի Կապուտան վարչական տարածքի ջրամատակարարման ծրագրի 5% ներդրում կատարելու նպատակով որոշում եմ՝

1.01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Ապարատի ծախս>> ծրագրի 5122 սինթետիկ հաշվից 2550000 դրամ տեղափոխել 06 բաժնի 03 խմբի 1 դասի <<Ջրամատակարարում>> ծրագրի 5112 սինթետիկ հաշվին:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018 թ. փետրվարի 26
գ. Ակունք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 19

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 33-րդ կետերի պահանջներով, որոշում եմ.

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ակունք համայնքի Նոր Գյուղ վարչական տարածքում գտնվող քաղաքացի Վրեժ Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր 07-049-0287-0034/- 0,051202 հա հողամասում ինքնակամ կառուցված (արտաքին չափերով) 236,78 քմ բնակելի և 91,29 քմ տնտեսական և օժանդակ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համարել օրինական համայնքի բյուջե (236,78 քմ բնակելի x 1300 դր = 307814 դր) և (91,29 քմ օժանդակ x 780 դր = 71206 դր) ընդամենը 379 020 դր վճարելուց հետո:

/Կադաստրային ծածկագիր 07-049-0287-0034/- 0,051202 հա հողամասին տրամադրել հասցե՝ Ակունք համայնք Նոր Գյուղ վարչական տարածք 1/1 փողոց 4-րդ հողամաս:

2. Ակունք համայնքի Նոր Գյուղ վարչական տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր 07-049-0287-0032/ -0,0559072 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա քաղաքացի Վրեժ Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցված (107,21 քմ ավտոտնակի և 75,66 քմ տնտեսական և օժանդակ շինություններ) ընդամենը 182,87 քմ (արտաքին չափերը) ինքնակամ կառույցը համարել օրինական և կատարել պետական գրանցում, /կադաստրային ծածկագիր 07-049-0287-0032/ -0,0559072 հա համայնքային սեփականության հողամասին տրամադրել հասցե՝ Ակունք համայնք Նոր Գյուղ վարչական տարածք 1/1 փողոց 2-րդ հողամաս:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2018 թ. 06.06
գ. Ակունք



Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 20

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Ծաղիկ Կնյազի Սահակյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ **14.02.2018-ին** <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող 5.86 հա, 0.38 հա, 4.0 հա մակերեսներով հողամասերը հանդիսանում են քաղաքացի Ծաղիկ Կնյազի Սահակյանի սեփականությունը, որոնք <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: 2008-2017թթ

Ժամանակահատվածի համար քաղաքացի Ծաղիկ Կնյազի Սահակյանի հողի հարկը վճարելու պարտավորությունը կազմում է 330.684 ՀՀ դրամ, որից ապառք՝ 230.029 ՀՀ դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ 100.655 ՀՀ դրամ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Ծաղիկ Կնյազի Սահակյանը 26.02.2018 թ-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումների, որին մասնակցելու նպատակով վերջինս պատշաճ ծանուցվել է /հիմք՝ քաղաքացի Ծաղիկ Սահակյանի կողմից **ծանուցագիրը 20.02.2018թ. ստանալու մասին ստորագրությունը**: Վերջինս չի ներկայացել է վարչական վարույթ լսումներին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մոծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի քույշե:

Համաձայն <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմոծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 16-րդ, <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ

Քաղաքացի Ծաղիկ Կնյազի Սահակյանից հոգուտ Ակունքի համայնքի բյուջե գանձել 330.684 ՀՀ դրամ, որից 230.029 ՀՀ դրամ, որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 100.655 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու լուծարման երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Ակունք համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության Դատական Ակտերի Հարկադիր Կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակունքի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

20

գ. Ակունք



Հ. ԿՈՒԲԵՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 21

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Սմբատ Մերյոժայի Կարապետյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 14.02.2018-ին <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող 0.9 հա, 5.34 հա, 4.0 հա մակերեսներով հողամասերը հանդիսանում են քաղաքացի Սմբատ Մերյոժայի Կարապետյանի սեփականությունը, որոնք <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: 2008-2017թթ ժամանակահատվածի համար քաղաքացի Սմբատ Մերյոժայի Կարապետյանի հողի հարկը վճարելու պարտավորությունը կազմում է 348.884 ՀՀ դրամ, որից

ապառք՝ 242.556 ՀՀ դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյուն, առաջացած տույժ՝ 106.328 ՀՀ դրամ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Սմբատ Մերյոժայի Կարապետյանը 26.02.2018 թ-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումների, որին ներկայանալով և մասնակցելով հայտնել է, որ գումար չունենալու պատճառով չի կարող վճարել հարկերը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 16-րդ, <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին , <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ

Քաղաքացի Սմբատ Մերյոժայի Կարապետյանից հօգուտ Ակունքի համայնքի բյուջե գանձել 348.884 ՀՀ դրամ, որից 242.556 ՀՀ դրամ, որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 106.328 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2.Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու լորվանից երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Ակունք համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակունքի համայնքի ղեկավարը:

2013 г. сентябрь 28

գ. Անդունք

Հ. Ռուբենյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 22

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Գուրգեն Վանոյի Զաքարյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 14.02.2018-ին <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն Առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող 6.08 հա, 4.0 հա, 0.16 հա մակերեսներով հողամասերը հանդիսանում են քաղաքացի Գուրգեն Վանոյի Զաքարյանի սեփականությունը, որոնք <Հողի հարկի մասին> ՀՀ օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: 2008-2017թթ ժամանակահատվածի համար քաղաքացի Գուրգեն Վանոյի Զաքարյանի հողի հարկը վճարելու պարտավորությունը կազմում է 345.147ՀՀ դրամ, որից ապառք՝ 239.469 ՀՀ դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ 105.678 ՀՀ դրամ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի , հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Գուրգեն Վանոյի Զաքարյանը 26.02.2018 թ-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումների, որին ներկայանալով և մասնակցելով հայտնել է, որ գումար չունենալու պատճառով չի կարող վճարել հարկերը:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետաց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 16-րդ, <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին , <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ

1. Քաղաքացի Գուրգեն Վանոյի Զաքարյանից հոգուտ Ակունքի համայնքի բյուջե գանձել 345.147 ՀՀ դրամ, որից 239.469 ՀՀ դրամ, որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 105.678 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Ակունք համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության Դատական Ակտերի Հարկադիր Կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակունքի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

20 18 թ.

գ. Ակունք



Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 23

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Իշխան Նորիկի Կարապետյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ **14.02.2018-ին** <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն Առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող 6.12 հա, 4.0 հա, 0.12 հա մակերեսներով հողամասերը հանդիսանում են քաղաքացի Իշխան Նորիկի Կարապետյանի սեփականությունը, որոնք <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: 2008-2017թթ ժամանակահատվածի համար քաղաքացի Իշխան Նորիկի Կարապետյանի հողի հարկը վճարելու պարտավորությունը կազմում է 178.633 ՀՀ դրամ, որից ապառք՝ 95.863 ՀՀ դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ 82.770 ՀՀ դրամ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայ Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հար վարչական վարույթի շրջանակներում Իշխան Նորիկի Կարապետյանը 26.02.2018 հրավիրվել է վարչական վարույթի լսումների և ներկայանալով հայտնել է, որ գու չունենալու պատճառով չի կարող վճարել հարկերը:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 16-րդ, <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին , <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

1 Քաղաքացի Իշխան Նորիկի Կարապետյանից հօգուտ Ակունքի համայնքի բյուջե գանձել 178.633 ՀՀ դրամ, որից 95.863 ՀՀ դրամ, որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 82.770 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Ակունք համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակունքի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2018 թ. *11/11/2018*

Գ. Ակունք



Հ.ՈՌԻԲԵՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 24

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Մարսել Սաղաթելի Վարդանյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ **14.02.2018-ին** <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն Առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող 2.76 հա, 2.0 հա, 0.369 հա մակերեսներով հողամասերը հանդիսանում են քաղաքացի Մարսել Սաղաթելի Վարդանյանի սեփականությունը, որոնք <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: 2008-2017թթ ժամանակահատվածի համար քաղաքացի Մարսել Սաղաթելի Վարդանյանի հողի հարկը վճարելու պարտավորությունը կազմում է 170.241 ՀՀ դրամ, որից ապառք՝ 118.503 ՀՀ դրամ, իսկ

օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ 51.73 դրամ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Մարսել Սաղաթելի Վարդանյանը 26.02.2018 թ-ին հրավիրվել է վարչական վարույթի լուծման և ներկայանալով հայտնել է, որ քանի որ իր հողաչափերի հետ կապված կոպիտ սխալներ կան հրաժարվում է հողի հարկը վճարելուց:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հողի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 16-րդ, <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

1. Քաղաքացի Մարսել Սաղաթելի Վարդանյանից հօգուտ Ակունքի համայնքի բյուջե գանձել 170.241 ՀՀ դրամ, որից 118.503 ՀՀ դրամ, որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 51.738 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Ակունք համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակունքի համայնքի



Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 25

**ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Լալա Վոլոդի Վարդանյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ **01.02.2018-ին** <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր աշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող 2.48 հա, 0.2 հա, 6.657 հա մակերեսներով հողամասերը հանդիսանում են քաղաքացի Լալա

Վոլոդի Վարդանյանի սեփականությունը, որոնք <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: 2008-2017թթ ժամանակահատվածի համար քաղաքացի Լալա Վոլոդի Վարդանյանի հողի հարկը վճարելու պարտավորությունը կազմում է 334.568 ՀՀ դրամ, որից ապառք՝ 239.589 ՀՀ դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ 94.979 ՀՀ դրամ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Լալա Վոլոդի Վարդանյանը 26.02.2018 թ-ին հրավիրվել է վարչական վարույթի լսմաների, որին մասնակցելու նպատակով վերջինս պատշաճ ծանուցվել է /հիմք՝ քաղաքացի Ծաղիկ Սահակյանի կողմից **ծանուցագիրը 19.02.2018թ. ստանալու մասին ստորագրությունը**: Վերջինս չի ներկայացել է վարչական վարույթ լսմաներին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> Հայաստանի

Հանրապետության օրենքի 1-ին, 16-րդ, <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին , <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ

1. Քաղաքացի Լալա Լուդի Վարդանյանից հոգուտ Ակունքի համայնքի բյուջե գանձել 334.568 ՀՀ դրամ, որից 239.589 ՀՀ դրամ, որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 94.979 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու իսկանից երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Ակունք համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության Դատական Ակտերի Հարկադիր Կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակունքի համայնքի ղեկավարը:



Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 26

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 660 որոշման կարգի 7-րդ կետի, 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1317 -Ն որոշման, որոշում եմ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող Գրիգորի Աղաջանյանի «Անվա» ահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից նախագծված նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Ակունքի համայնքի վարչական տարածքում գտնվող Նոր Գյուղ բնակավայրի ծածկագիր՝ 0250 - 0021, 0.4828 հա գյուղնշանակության հողամասի վրա անասնագոմի կառուցման համար:

2. Կառուցման համար նախատեսված 215 քմ գյուղնշանակության հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրելով արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա:

3. Կառուցապատող Գրիգորի Աղաջանյանի՝ կառուցապատումը իրականացնել համաձայն նախագծի, շինարարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունը սկսելու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

20/

գ. Ակունք



ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 27

**ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱԾԵՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Համաձայն Ակունքի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 55-Ն որոշման 2-րդ կետի որոշում եմ՝

1. 05 բաժնի 01 խմբի 1 դասի <<Աղբահանություն>> ծրագրի 4637 սինթետիկ հաշվից 800000 դրամ տեղափոխել 05 բաժնի 01 խմբի 1 դասի <<Աղբահանություն>> ծրագրի 4213 սինթետիկ հաշվին՝ կոմունալ ծառայությունների ծախսերի դիմաց վճարելու համար:
2. 05 բաժնի 01 խմբի 1 դասի <<Աղբահանություն>> ծրագրի 4637 սինթետիկ հաշվից 500000 դրամ տեղափոխել 06 բաժնի 04 խմբի 1 դասի <<Փողոցային լուսավորություն>> ծրագրի 4251 սինթետիկ հաշվին՝ փողոցային լուսավորության ընթացիկ նորոգման ծառայությունների ծախսերի դիմաց վճարելու համար:
3. 05 բաժնի 01 խմբի 1 դասի <<Աղբահանություն>> ծրագրի 4637 սինթետիկ հաշվից 300000 դրամ տեղափոխել 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Ապարատի ծախս>> ծրագրի 4251 սինթետիկ հաշվին՝ ընթացիկ նորոգման ծախսերի դիմաց վճարելու համար:
4. 05 բաժնի 01 խմբի 1 դասի <<Աղբահանություն>> ծրագրի 5121 սինթետիկ հաշվից 600000 դրամ տեղափոխել 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Ապարատի ծախս>> ծրագրի 5113 սինթետիկ հաշվին՝ շենքի կապիտալ նորոգման համար ձեռք բերված շինանյութերի ծախսերի դիմաց վճարելու համար:
5. 09 բաժնի 04 խմբի 1 դասի <<Ուսման վարձ>> ծրագրի 4729 սինթետիկ հաշվից 500000 դրամ տեղափոխել 10 բաժնի 07 խմբի 1 դասի <<Սոցիալապես անապահով անձանց աջակցություն>> ծրագրի 4729 սինթետիկ հաշվին՝ սոցիալապես անապահով բնակիչներին աջակցություն ցուցաբերելու նպատակով:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



20/12/2018 թ. *[Signature]*
գ. Ակունք

[Signature]

Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 28

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 29-ին թիվ 10 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ակունք համայնքի գյուղ Ակունքի բնակիչ՝ Գրիգոր Համլետի Սարգսյանի, գյուղ Նոր Գյուղի բնակիչ Վարդան Մանուկի Հովհաննիսյանի և գյուղ Կապուտանի բնակիչ Մարտիկ Արմենի Մուրադյանի դիմումները **որոշում եմ՝**

1. Ակունքի համայնքի ներքոնշյալ բնակիչներին տրամադրել ֆինանսական աջակցություն՝

Գրիգոր Համլետի Սարգսյանին 100000 դրամ,

Վարդան Մանուկի Հովհաննիսյանին 50000 դրամ,

Մարտիկ Արմենի Մուրադյանին 100000 դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2018 թ. 4 հունիսի 28
գ. Ակունք

Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ